ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/201

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2021թ. թիվ 26/26-1/12228-2021 գրությամբ «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 23.07.2021թ. թիվ 3/27/48033-21 գրության հիման վրա, 30.07.2021թ. թիվ 26/26-1/12228-2021 գրությամբ նախաձեռնել է «Արշավիր ավտո» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Արշավիր Ավտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Արշավիր Ավտո» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 04.08.2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-Պահեստամաս-48/1 պայմանագրի նախագծի N76 չափաբաժնում նշված պահեստամասի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ընդունող ստորաբաժանման պահանջին: Ընդունող ստորաբաժանումը կիսասռնին պահանջում է լրակազմով, իսկ կիսասռնին ունի երեք ամբողջական մասեր՝ լրակազմի կոդ 21200221501110, դրսի կիսասռնի կոդ 2123022101287, ներսի կիսասռնի կոդ 21230221505786:

Ելնելով ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-Պահեստամաս-48/1 պայմանագրի նախագծի N76 չափաբաժնում նշված պահեստամասի տեխնիկական բնութագրի ոչ ամբողջական և կոդերը գրված չլինելու պատճառով հրաժարվում եմ N 76 չափաբաժնում նշված պահեստամասը մատակարարել»:

«Արշավիր Ավտո» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/201 ընթացակարգի շրջանակներում 05.08.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.07.2021թ. թիվ 3/27/48033-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կարիքների համար 04.06.2021թ. հայտարարված ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48 ծածկագրով ավտոպահեստամասերի ձեռքբերման գնման ընթացակարգի արդյունքում հայտ է ներկայացրել «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ն: Վերջինս 76-րդ չափաբաժնով համարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվել է մատակարարել ապրանքը տվյալ չափաբաժնի մասով:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք Ձեզ ձեռնարկել միջոցներ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/201 ընթացակարգի շրջանակներում 05.08.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/201 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/201 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ին 1-ին, 2-րդ, 3-րդ, 17-րդ, 23-րդ, 26-րդ, 27-րդ, 31-րդ, 33-րդ, 34-րդ, 36-րդ, 62-րդ, 63-րդ, 64-րդ, 66-րդ, 67-րդ, 75-րդ և 76-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

3. «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ն, ՀՀ ոստիկանությանն ուղղված 14.07.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48/1 պայմանագրի նախագծի N76 չափաբաժնում նշված պահեստամասի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ընդունող ստորաբաժանման պահանջին: Ընդունող ստորաբաժանումը կիսասռնին պահանջում է լրակազմով, իսկ կիսասռնին ունի երեք ամբողջական մասեր՝ լրակազմի կոդ 212300221501110, դրսի կիսասռնի կոդ 21230221501287, ներսի կիսասռնի 21230221505786:

Ելնելով ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-Պահեստամաս-48/1 պայմանագրի նախագծի N76 չափաբաժնում նշված պահեստամասի տեխնիկական բնութագրի ոչ ամբողջական և կոդերը գրված չլինելու պատճառով հրաժարվում եմ N76 չափաբաժնում նշված պահեստամասը մատակարարել:

Ուստի Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ի և ՀՀ ոստիկանության միջև թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48/1 պայմանագրի երկուական օրինակը առանց N76 չափաբաժնի, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները»:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 14.07.2021թ. «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն, որով վերջինս հրաժարվել է մատակարարել 76-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.07.2021թ. թիվ 26/26-1/12228-2021 գրությունը, ՀՀ ոստիկանության 23.07.2021թ. թիվ 3/27/48033-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.06.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ին 1-ին, 2-րդ, 3-րդ, 17-րդ, 23-րդ, 26-րդ, 27-րդ, 31-րդ, 33-րդ, 34-րդ, 36-րդ, 62-րդ, 63-րդ, 64-րդ, 66-րդ, 67-րդ, 75-րդ և 76-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

«Արշավիր Ավտո» ՍՊԸ-ն, ՀՀ ոստիկանությանն ուղղված 14.07.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48/1 պայմանագրի նախագծի N76 չափաբաժնում նշված պահեստամասի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ընդունող ստորաբաժանման պահանջին: Ընդունող ստորաբաժանումը կիսասռնին պահանջում է լրակազմով, իսկ կիսասռնին ունի երեք ամբողջական մասեր՝ լրակազմի կոդ 212300221501110, դրսի կիսասռնի կոդ 21230221501287, ներսի կիսասռնի 21230221505786:

Ելնելով ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-Պահեստամաս-48/1 պայմանագրի նախագծի N76 չափաբաժնում նշված պահեստամասի տեխնիկական բնութագրի ոչ ամբողջական և կոդերը գրված չլինելու պատճառով ***<u>հրաժարվում եմ N76 չափաբաժնում նշված պահեստամասը մատակարարել:</u>***

Ուստի Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ի և ՀՀ ոստիկանության միջև թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ-48/1 պայմանագրի երկուական օրինակը <u>առանց N76 չափաբաժնի</u>, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.07.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել

է, որ ***<u>14.07.2021թ. «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն, որով վերջինս հրաժարվել է մատակարարել 76-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը</u>***:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով ՀՀ ոստիկանության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո՝ 14.07.2021թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ, հրաժարվել է N76 չափաբաժնում նշված պահեստամասը մատակարարել, այսինքն՝ ըստ էության հրաժարվել է N76 չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.07.2021թ. թիվ 26/26-1/12228-2021 գրությամբ «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արշավիր Ավտո» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**